



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,  
verinptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
26 ՀՈՒՆԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 112**

**ԳԱԳԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, ինչպես նաև քաղ. Գագիկ Հովսեփյանի դիմումը՝ **որոշում եմ**

1. Գագիկ Հովսեփյանին տալ իրեն պատկանող բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն :
2. Հանձնարարել Գագիկ Հովսեփյանին շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:
3. Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 19 թ. հունիսի 26  
գ. Վերին Պտղնի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48, Հեռ. 060517670 էլ. փոստ  
verinptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**26 ՀՈՒՆԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ 113**

**<<ԱՐՍԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ>> ԱԶ-ԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 50-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով <<Արսեն Նալբանդյան>> ԱԶ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ**

1. Բավարարել <<Արսեն Նալբանդյան>> ԱԶ-ի կողմից ներկայացված հայտը և տրամադրել տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն՝ 2019 թվականի 3-րդ եռամսյակի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**